

46709



ՆՈՒՐԵԱՆ

Մասնադարանի նազարեայ
Ս. Նկեղեցոյն Հայոց, Ի Յիշատակ
Հանգուցեալ ՄԱՐԻԱՄԱՐԻ, Դասերն
Յարութիւնի Գրիգոր Արքաւեան
Ի Կողմար

ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ:

Մասն Առաջին.

Կրթ. ԴՈՒ քրիստոնեայ ես
ապաստանէ: Այո՞ քրիստոնեայ եմ շնոր-
հօքն Քրիստոսի,

Ձի՛նչ է նշանն քրիստոնէից:
Սուրբ և պատուական Խաչն Քրի:
Խաչակիքեա՛ զի տեսից թէ ո՛րպէս Խա-
չակիքս:


Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ. Դ.
Ո՛ր ստեղծ զքեզ:

Ա՛ճ ամենակարողն:

Ասա՛ն է՛ր ստեղծ:

Ասան այն՝ զի զի՛նքն ճանաչիցեմ և զկասկէ

50709



կատարիցեմ: և վերջապէս օրքայու
թեանն արժանաւորիցիմ:

Հ. Ձի՛րնչ է Աժ:

Պ. Է ստեղծող երկնի և երկրի, երեւելա
և աներևութից:

Հ. Աժ քանի՛ է:

Պ. Մի է:

Հ. Աստուածային անձինք քանի՛ք են:

Պ. Երեք են:

Հ. Երեք անձանց անուանքն զի՛նչ են:

Պ. Միոյն անունն՝ Հայր է, երկրորդին՝ Որդ
է, և երրորդին՝ Հոգի սուրբ:

Հ. Ուրեմն Հայր Աստուած է:

Պ. Այո՛ Աստուած է:

Հ. Որդին Աստուած է:

Պ. Այո՛ Աստուած է:

Հ. Հոգին սուրբ Աստուած է:

Պ. Այո՛ Աստուած է:

Հ. Ապա ուրեմն երեք աստուածք են:

Պ. Ո՛չ երեք աստուածք են, այլ մի Աստուած
և երեք անձինք:

Ման երեւոյց:

Հ. Այս յեղից անձանց ո՛ր անձն մար
դասաւ:

Պ. Միայն որդւոյ անձն մարդասաւ:

Մարդասաւ անելն զի՛նչ ասել է:

Պ. Մեզ նման կատարեալ մարդ եղև ա
սել է, մարմին առնելուն ՚ի մարդու
յարենէն կուսին Մարիամու:

Հ. Մարմին առնողն ո՛ր վ է:

Պ. Բանն Աստուած, որ է միածին որդին:

Հ. Յորո՞ւմ աւուր էառ զմարմինն:

Պ. Ի յեօթն Ապրիլի ամսոյն որ է օր
Աւետման:

Հ. Ձի՛րնչ է առեցեալն:

Պ. Հոգի միտք և մարմին, որք են մարդ
կայինք:

Հ. Ձի՛մարդ առօրն և առեցեալն լինին ՚ի
անձն և մի բնութիւն:

Պ. Քանզի բանն Աստուած այնպէս միառ
բեաց ընդ անձին և բնութեան իւրում

զմարդկութիւնն, որպէս մարտին մե
միաւորեալ է ընդ հոգւոյ մերում, և
մի բնութիւն եղեալ է ընդ նմա առանց
շփոթման: Սոյնպէս և մարդկութիւնն
միաւորեցաւ ընդ անձին և ընդ բնու-
թեան բանին Աստուծոյ, և մի Ածա-
մարդկային բնութիւն եղև ընդ նմա
առանց շփոթման և առանց փոփոխ-
ման: որպէս վկայեն սբ հարքն Աթա-
նաս, Կիւրեղ և այլք:

Հ. Յիսուս ասելն զի՛նչ ասել է:

Պ. Փրկիչ ասել է. զի փրկեաց զմեզ ի
ձեռաց սատանայի և ի տանջանա-
րժոխոց:

Հ. Քրիստոս ասելն զի՛նչ ասել է:

Պ. Օծեալ ասել է. վասն զի քանն Ած-
մարդայեալ օծեցաւ ի հօրէն ԱՅ.
հոգւով սրբով. որպէս Պետրոս առ-
քեալն ուսուցանէ. Գործ. 10.

Հ. Տէր մեր Յիսուս Քրիստոս յորում
աւուր ծնաւ:

Պ. ի վէցում աւուրն յունւարի ամսոյն:

Հ. ի՛նչ ծնաւ:

Պ. ի բեթղէհէմ քաղաքի ի մսուրն ան-
բանից:

Հ. Յունմէ՞ ծնաւ:

Պ. ի Կուէն. Մարիամու, որպէս ի վերոյ
ասացաւ:

Հ. Մարիամ Աստուածածինն Կոյս մնաց
յետ ծնանելոյն:

Պ. Այո՞ վասն զի անսերմն յղացաւ, և անա-
ղակամաբար ծնաւ. վասն որոյ յետ,
ծնանելոյն Կոյս Խնայ:

Հ. Քրիստոս ըստ Աստուածութեն ծնեալ
էր ի հօրէ:

Պ. Այո՞ ծնեալ էր:

Հ. Ըստ Ածմարդկութեանն ծնաւ ի մօրէ:

Պ. Այո՞ ծնաւ:

Հ. Առաջին ծնունդն ո՛րպէս էր:

Պ. Ընթամանակ և անմարմին ծնունդ. առան-
մեր:

Հ. Երբ որդ ծնունդն ո՛րպէս էր:

Պ: Ժամանակեայ և մարմնով ծնունդ առնող հօր:

Հ: Քանի՜ ամայ եր Քրիստոս, յորժամ եկն 'ի մկրտութիւն:

Պ: Երեսնամեայ եր՝ ըստ վկայութեան Ղուկասու աւետարանչիս:

Հ: Յորում ամայ մկրտեցաւ:

Պ: 'Ի վեցն յաւնութի ամայն, յորում աւուր ծնեալ եր 'ի կուսէն՝ ծնաւ մկրտութեամբ և 'ի Յորդանանէ յօրինակ մեզ և զի երկօքին ծնունդք են՝ թեպէտ և զանազանեալք են 'ի միմեանս խորհրդեամբ և ժամանակաւ, որպէս վկայեն բազում սուրբ Հարբ, մանաւանդ սուրբն Ներսէս շնորհալի՝ հայրապետն մեր կայեցի:

Հ: Յամմէ՜ մկրտեցաւ Քրիստոս:

Պ: 'Ի Յովհաննէ որդւոյն Զաքարիայի և Եղիսաբեթի:

Հ: Ո՛ւր մկրտեցաւ:

Պ: Ի գետն Յորդանան:

Հ: Զի՞նչ պատճէ լիք եղեն անդ:

Պ: Հայրն ամենակալ ձայնիւ, և Հոգին սուրբ իջմամբն՝ յայտնեցին Ղ-Քրիստոսի, Աստուածութիւնն, վասն որոյ զԾննդեանն կօչի և օր յայտնութեան:

Հ: Քրիստոս քանի՜ տարի շրջապեցաւ 'ի վերայ երկրի:

Պ: Երեսուն և երեք տարի և կէս:

Հ: Այնքան ժամանակ զի՞նչ արար:

Պ: Ուսուց հետևողայ իւրոյ զճանապարհն ճշմարտութեան:

Հ: Յեռ այնքան ժամանակի կատարմանն զի՞նչ արար:

Պ: Եկն կամաւ 'ի չարչարանս, խաչեցաւ և մեռաւ վասն մեր ըստ առաքելոյն՝ թէ Քրիստոս մեռաւ վասն մեզայ մերոյ, և այլն:

Հ: Ո՛ւր խաչեցաւ և մեռաւ:

Պ: 'Ի լեառն գողգոթայ՝ մերձ 'ի քաղաքն Երուսաղէմ:

Հ: Ընդ է՛ր մեռաւ:

Պ: Վասն փրկութեան մերոյ:

Հ: Յորոյ վերայ մեռաւ:

Պ: Ի վերայ խաչադիպտին:

Հ: Եթէ Քրիստոս ԱՅ էր՝ զի՛արդ մեռաւ:

Պ: Ո՛չ ասեմ թէ աստուածային բնութեամբն մեռաւ, այլ առեցեալ մարմնովն, այսինքն՝ անճառելի միակորութեամբն. վասն որոյ և ասի Աստուած խաչեցաւ և մեռաւ:

Հ: Չկնի մահուանն՝ զի՛նչ արարին զմարմինն Քրիստոսի:

Պ: Առին ՚ի խաչէն. և եդին ՚ի նորափոր գերեզմանի՝ անբաժանելի աստուածութեամբն:

Հ: Քանի՛ օր մնաց ՚ի գերեզմանի:

Պ: Երեք օր:

Հ: Ո՛րով էջ ՚ի դժոխս:

Պ: Բանական հոգևովն:

Հ: Յորժամ էջ ՚ի դժոխս՝ զի՛նչ արար:

Պ: Աւերեաց զիժոխս և ազատեաց զհոգիսն՝ որք էին ՚ի բանտին:

Ման երբ:

Հ: Սուրբ եկեղեցի ասելն՝ զի՛նչ ասել է:

Պ: Եկեղեցին է ժողովուրդն ամենայն հաւատացեալ Քրիստոնէից. որք մկրտեալք են յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Հ: Չի՛նչ է խորհուրդ եկեղեցւոյ:

Պ: Է ազատութիւն հոգեւոր:

Հ: Քանի՛ք են:

Պ: Եօթն են:

Հ: Չի՛նչ են:

Պ: Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Պսակ, Ձեռնադրութիւն, և վերջին օծոյմն:

Հ: Մկրտութիւնն զի՛նչ է:

Պ: Է լուացումն արտաքին մարմնոյ և մաքրումն ներքին՝ հոգւոյ, և ազատութիւն ՚ի սկզբնական մեղաց:

Հ: Դրոշմն զի՛նչ է:

Պ: Է հաստատութեան խորհուրդ ՚ի հաւատս Քրիստոսի և կնիք ճանաչման:

որ տուեալ լինի առ ՚ի զօրոյուցանել և քաջացուցանել զմարդն. և լինիլ զինուոր Քրիստոսի:

Հ. Հաղորդութիւնն զի՛նչ է:

Պ. Ե Մարմին և Արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և կերակուր հոգեւոր, որ և վերջապէս տայ մեզ Ժառանգել զկեանս յաւիտեանականս:

Հ. Ապաշխարութիւնն զի՛նչ է:

Պ. Ե զանցեալ չարիսն լաւ, և զլալի իրս մի ևս գործել, կամ դարձումն ՚ի մեղաց, և գտանել վերստին զկորուսեալ շնորհսն:

Հ. Քահանայութիւնն զի՛նչ է:

Պ. Ե հոգեւոր իշխանութիւն իմն՝ որով կարող է մատուցանել զպատարագ, նա և զայլ խորհուրդս կատարել:

Հ. Պատկն զի՛նչ է:

Պ. Ե խորհուրդ եկեղեցւոյ, որ ՚ի բայ բառնայ զշնութիւն և զպոռնկութիւն, և անլուծառելի կապանօք կապէ զայն և զկինն ընդ իրեաքս վրան չիճի:

Թեան իւրեանց, ծնանիլ և սնուցանել զորդիս ՚ի պաշտումն Աստուծոյ:

Հ. Զի՛նչ է վերջին օծումն:

Պ. Ե խորհուրդ եկեղեցւոյ, որ կացուցեալ է առ ՚ի սրբել զներելի մեղս:

Հ. Եկեղեցին մեր ունի՞ զխորհուրդս զայս:

Պ. Այո՛ ունի. բայց ՚ի մկրտութեան ընդ դրոշմին տայ ամենայն մկրտելոց:

Հ. Ասան է՞լ այսոյէս:

Պ. Ասան զի կացուցեալ էր խորհուրդս այս ՚ի սրբել զներելի մեղս, որպէս խոստովանութիւնն զմահացուն. իսկ ոմանք այսու յուսով զխոստովանութիւնն բառնային, որպէս այլ ազգք ոմանք բարձեալ են. ուստի հարկ եղև սրբել հարցն՝ կցել զսա ընդ դրոշմին, զի մի այսու յուսով բարձեալ լինի խոստովանութիւնն:

Հ. Գո՞նց այլ ևս պատճառ յաղագս կցելոյ զսա ընդ դրոշմին:

Պ. Այո՛, ՚ի բառնիլ Թագաւորութեան մերոյ, ազգք մեր տարագրեալք եղևն

յաշխարհէ մերմէ ընդ տիեռէրս, և
բազումք ՚ի մէջ գերութեանն ՚ի ձեռս
անհաւատից մեռանէին առանց քահա-
նայի. վասն այսորիկ սահմանքին սբ
Հարքն մեր ՚ի մկրտութեանն ընդ
դրոշմին տալ զօծումնս զայս զի մի
զրկիցին ՚ի սմանէ. այլ իբրև զգեղ
նախապահպանողական ամենեքեան ու-
նիցին առ ինքեանս:

Հ: Զի՞նչ է վերջին օծումն քահանայից:

Պ: Է պատիւ քահանայութեան կարգի:

Հ: Ուստի՞ առեալ է եկեղեցին մեր զայս:

Պ: Ի սրբոյն Դիոնէսիոսէ Արիստագապոյ,
որ ՚ի մէջ գրքին յաղագս եկեղեցա-
կան քահանայապետութեան գլուխ է.
ի մասն թ, ասէ. Թէ Ուաքելական
աւանդութիւն էր զսրբազան ննջե-
ցեալսն օծանել:

Հ: Առաքինութիւնն զի՞նչ է:

Պ: Է ունակութիւն մտաց՝ զոր ընդունի
հոգին, և լինի բարեգործ:

Հ: Քանի՞ք են:

Պ: Եօթն են:

Հ: Ո՞րքիսիք են՝ ասա՛, զոր լսեմ:

Պ: Հաւատ, Յոյս, Սէր, Արիութիւն, Ար-
դարութիւն, Խոհմտութիւն, և Ող-
ջախոհութիւն.

Հ: Հաւատն զի՞նչ է:

Պ: Է պարզ և մի հեղեալ ՚ի մեզ յԱյս
զի նուալ ճանաչիցեմք զԱստուած ամե-
նազօր և ստեղծիչ լեալ:

Հ: Յոյսն զի՞նչ է:

Պ: Յոյսն է ստոյգ ակնկալութիւն հանդեր-
ձեալ բարեացն, զոր տալոյ է Աստ-
ուած յաւուրն հատուցման:

Հ: Սէրն զի՞նչ է:

Պ: Է ունակութի մտաց, որով սիրեմք զԱ
վասն բարերարութե. և զլնկերս մեր
հաւասար մեզ վասն Աստուծոյ:

Հ: Արիութիւնն զի՞նչ է:

Պ: Է ընդդէմ լինիլ փորձուէց աշխարհի
և քժուարին կրիցն անհանդուրժելի:

Հ: Արդարութիւնն զի՞նչ է:

Պ: Է հաւասարաբաշխութիւն ՚ի հոգի և

ի մարմինս և ոչ իւրացուցանէ: Ըզին չսն
այլոց ինքեան:

Հ: Խոհեմութիւնն զի՞նչ է:

Պ: Եւ ընտրութիւնն առնել ՚ի մէջ բարեւոյ և չա-
րի, չխաբել զոգ և չխաբիլ յովմբէ:

Հ: Ողջախոհութիւնն զի՞նչ է:

Պ: Եւ ՚ի բնաց մերժել յինքենէ զամենայն
մարմնական հեշտութիւնս և յանկու-
թիւնս՝ որք պատահին:

Հ: Քանի՞ք են պարգևք Հոգւոյն սրբոյ:

Պ: Եօթն են՝ քի, Իմաստութիւն, Հանճար,
Խորհուրդ, Զօրութիւն, Գիտութիւն, Աժ-
պաշտութիւն և երկիւղ Աստուծոյ:

Հ: Քանի՞ք են գործք ողորմութեան, որ ՚ի յիշա-
տակ գան յաւուրն գատաստանի:

Պ: Եօթն են՝ ախիբն, Կերակուել զբաղ-
յեալս: Արբուցանել զծարաւեալս:
Զգեցուցանել զմերկս, Ժողովել զօ-
տարս: Տեսանել զհիւանդս: Այց առ-
նել բանտարկելոց: Թաղել զմեռեալս:
այսոքիկ են մարմնաւոր ողորմութիւնք:

Հ: Գո՞ն ևս հոգեւոր ողորմութիւնք:

Պ: Այո, Կան այլ ևս եօթն հոգեւոր ողոր-
մութիւնք՝ ախիբն, Խրատել զերկ-
միտսն: Առաջնորդել տգիտաց: Կըշ-
տամբել զմեղսսէրս: Մխիթարել
զտրամեալս: Թողուլ զպարտս: Յանձ-
նառնուլ զլիշտս: Աղաչել զԱժ վամ
կենդանեաց և մեռելոց և վասն մեղաց

Հ: Քանի՞ք են օրինացն բանք. Կամ ՚ի ձեռ-
նորոյ ետ Աստուած զնոսա:

Պ: Տասն են բանք օրինացն Աստուծոյ, և ՚ի
ձեռն Մովսիսի ետ ՚ի լեառն Սինայի:

Հ: Ասա մի ըստ միօրջէ զի գիտացից:

Պ: Առաջինն՝ Ես եմ տէր Աստուած քո. և
մի եղիցի քեզ այլ Աժ՝ բայց յինէն
և մի դիցես զանուն Աստուծոյ քո՝
վերայ մոտեաց: Երկրորդն՝ Մի ա-
րասցես քեզ կուռս ըստ ամենայն
նմանութեան՝ յերկինս ՚ի վեր, և յերկր
ի խոնարհ: Երրորդն՝ Յիշեա՛ զի
սրբեացես զօր շաբաթուն, որ մեզ կի-
րակի: Չորրորդն՝ Պատուեա՛ զհայր
քո՝ և զմայր քո: Հինգերորդն՝ Մի

սողանաներ, Աեցե՛րորդն՝ Մի՛ շնար:
Եօթնե՛րորդն՝ Մի՛ գողանար: Ութ
երորդն՝ Մի՛ սուտ վկայեր զընկերէ
քումէ: Իննե՛րորդն՝ Մի՛ երբեմուր
սուտ յանուն տեառն Աստուծոյ քո:
Տասնե՛րորդն՝ Մի՛ նախանար կնոջ
ընկերի քո: և մի՛ տան նորա, և մի՛
ընչից նորա, և մի՛ ամենայն իրաց՝ որք
նորա իցեն:

Ը: Քանի՞ք են ազգք մեղաց:

Ը: Երկու: Ի՞նչ սկզբնական և ներգործական:

Ը: Ձի՞նչ է սկզբնականն, և զի՞նչ ներ-
գործականն:

Ը: Սկզբնականն՝ ի հօրէն մերմէ Ադամայ
սերեալ ունիմք ամենքեան, որ ջնջի
մկրտութիւն, իսկ ներգործականն՝ յետ
մկրտութեան կամօք մերովք զոր գոր-
ծեմք՝ այն է:

Ը: Ներգործականն ի՞նչ քանի՞ս բաժանի:

Ը: Յերիս, այսինքն՝ Մահացու՝ Ներե՛լ՝ և
Փոշատեսակ:

Ը: Մահացուն զի՞նչ է:

Ը: Ե՛տ այն՝ զի յորոյ վերայ գտանիցի՝ զն
մահացուցանէ:

Ը: Ներե՛լ և Փոշատեսակն զի՞նչ է:

Ը: Նոքա են, զի եթէ մարդ որ գործէ և
մոռանայ, կամ թեթեալէս կրէ զա
պաշխարարքն, կամ լիապէս չկատարէ
թողու Աճ, վասն զի ներե՛լի և փոշե-
տեսակ ասելն՝ կարի թեթև մեղքս
սեւ է: որպէս տնուանքն պարզապէ
յայտեն:

Ը: Մահացու մեղք քանի՞ք են:

Ը: Եօթն են, այսինքն՝ Հպարտութիւն, Նա-
խանձ, Բարկութիւն, Ծուլութիւն,
Ագահութիւն, Որկրամոլութիւն, և
Բռնախոհութիւն:

Ը: Արի՞ժախոհի մեղք յԱստուծոյ ո՞րք են:

Ը: Են ասորիկ՝ Անմեղ՝ սպանումն, Արտա-
գիտութիւն, Զրկանք աղքատաց, Հա-
տնել զվարձս մշակաց, Հորքս ոյսո-
րիկ են սարսափելիք:

Ը: Բայց են առաքինութիւնք՝ ընդդէմ

եօթն մոլութեանց:

Ե. Եօթն են, այսինքն՝ Խոտարհութիւն՝
ընդդէմ Հպարտութե: Բարեհաճութիւն՝
ընդդէմ Նախանձութե: Հեղութիւն՝ ընդ-
դէմ Բարկութե: Առաքատութիւն՝
ընդդէմ Ագահութեան: Արիութիւն՝
ընդդէմ Ծուլութե: Պահեցողութիւն՝
ընդդէմ Որհրամսլութե: Ողջախումբ
ընդդէմ Բղջախոհութեան:

Զ. Մեղքն քանի՞ բանիւ գործեալ լինի:

Ե. Երեք՝ այսինքն՝ Խորհրդով, Բանիւ, և
Գործով:

Զ. Պատմեա՞ մի ըստ միոջէ՝ որ խմանամ:

Ե. Խորհրդովն մեղանչել. կոչի՝ յորժամ
ի սրտի մերում չար խորհրդի: Բա-
նիւն այն է, երբ որ յիշոցս հանեմք
ի բերանոյ: Գործովն որ ձեռօք, կամ
ոտիւք կատարեմք և ի գլուխ անեմք:

Զ. Քանի՞ բարք են որ զմարդն վստեցուցա-
նեն զմեզս գործելոյ:

Ե. Օրս, այսինքն՝ Մահ, Արեւ, Կառնու-

տանն, Դժոխքն ասպին և Արքայու-
թիւնն անձառ:

Զ. Մի միայն զբրիտտոնէական հաւատոյ զոր-
պիտութիւնն ճանաչելով՝ փրկութեան
հասանեմք՝ Թէ ոչ:

Ե. Մի միայն ճանաչողութե՞ ոչ հասանեմք:

Զ. Ասն էր:

Ե. Ասն այն, զի հաւատք առանց գործոյ
նմանին մեռեալ մարդոյ, որպէս սրբա-
զան Պապեալն վկայէ, Թէ հաւատք
առանց գործոյ մեռեալ է:

Զ. Զի՞նչ են բարի գործքն:

Ե. Աղօթք, Պահք, և Ողորմութիւնք:

Զ. Գիտե՞ս զտէրունական աղօթքն:

Ե. Այո՞ գիտեմ:

Զ. Ասա՞ զոր տեսանեմ:

Ե. Հայր մեր՝ որ յերկիս ես. սուրբ եղիցի
անուն քո. եկեսցի արքայութիւն քո.
եղիցին կամք քո, որպէս յերկինս և
յերկիւի: Չհայ մեր հանապազոր-
տուր մեզ այսօր. և Թող մեզ զպար-
տիւն մեր՝ որպէս և միք Թողումք մեզոյ:

պարտապանաց. և մի տանիւր զմեզ 'ի
փորձուելոյ այլ փրկեալ զմեզ 'ի չարէն:
Զի քո է արքայութիւն, և զօրութիւն,
և փառք յաւիտեանս, ամէն:

Զ. Գիտե՞ն 'ի դէմս սրբունոց Աստուած-
ածնին նաճմանաբերեալ աղօթքն:

Պ. Այո՛ գիտեմ:

Զ. Ասա՛ զոր լուայ:

Պ. Անկանիմք՝ առաջի քո՝ տիրամայր սուրբ
Աստուածածին. և աղաչեմք զանաբառ
զկոյսդ. բարեխօսեալ վասն անձանց մե-
րոց. և աղաչեալ զմիածին ուրդիդ փրկ-
կեւ զմեզ 'ի փորձութե և յամենայն
վտանգից մերոց: Որ արձակիչդ ես
կայելց՝ պարգևատու ամենեցուն,
այսօր հայցմամբ ծերունւոյն՝ արձա-
կեալ և զիս զբաղմամբս 'ի կապանաց
մահու 'ի կեանսդ յաւիտեանց, ամէն:

Ի Կապան. Տպագրեալ 'ի Գործարան
Հայկեան Մարդասիրական. Կոնստանդնուպոլիս
'ի 1 Յունիս, 1862:



ԱՄ Բալագիտական գրադարան



MAL001254

